Համաձայնագիր

ք.Երևան 04.03.2015թ.

«Անելիք Բանկ» ՓԲԸ-ն, ի դեմս վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանի, ով գործում է համաձայն ընկերության կանոնադրության (այսուհետ՝ «Բանկ») մի կողմից, և «Բ.Մ.Լ. ԱՐԶՆԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Աֆանդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ «Գրավատու»), (այսուհետ միասին՝ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը գալիս են փոխադարձ համաձայնության առ այն, որ «Բյուրակն» ՍՊԸ-ի և Բանկի միջև 10.06.2010թ կնքված թիվ ՀԳ3088 Գլխավոր վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման համար Բանկի և Գրավատուի միջև 10.06.2010թ. կնքված թիվ ՀԳ3088-3 գրավի պայմանագրով գրավադրված Գրավատուին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան, Կոտայքի ½ հասցեում գտնվող Արզնու հանքային ջրերի գործարանի (մակ.՝ 13568,8 քառ.մ), հողամասը (մակ.՝ 2,7600 հա), ծածկարանները (մակ.՝ 1073,6 քառ.մ, 112,5 քառ.մ, 91,6 քառ.մ) (այսուհետ միասին՝ «Գույք») նկատմամբ արտադատական կարգով բռնագանձման գործընթաց իրականացնելուն հաջորդիվ Բանկը պարտավորվում է Գրավատուին կամ վերջինիս նշած երրորդ անձին տրամադրել 2 տարի ժամկետով գնման բացառիկ նախապատվության իրավունք:
2. Գույքի գնման գինը Կողմերի համաձայնությամբ կկազմի ոչ պակաս քան գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու օրվա դրությամբ բռնագանձման արժեքի և իրացման ծախսերի հանրագումարը:
3. Սույն համաձայնագրի 1-ին կետում նշված ժամկետի ավարտից հետո Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ առանց Գրավատուի համաձայնության և առանց վերջինիս տեղեկացնելու տնօրինել Գույքը:
4. Սույն համաձայնագրի 1-ին կետով սահմանված նախապատվության իրավունքը չպահպանելը հանգեցնում է տույժի վճարման՝ բռնագանձման արժեքի հնգապատիկի չափով: Սույն կետում նշված տույժի առաջացման պահին տույժի գումարը «Անելիք Բանկ» ՓԲԸ-ն պարտավորվում է ուղղել «Սենթրալ Սթեյշն» ՍՊԸ-ի, «Էկոպրինտ» ՍՊԸ-ի և «Սուփրա» ՍՊԸ-ի՝ Բանկի նկատմամբ տվյալ պահին առկա պարտավորությունների մարմանը:
5. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից, կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

«Անելիք Բանկ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Վարդանանց 13
ՀՎՀՀ՝ 00005409
վարչության նախագահ՝ Ներսես Կարամանուկյան

_____

«Բ.Մ.Լ. ԱՐԶՆԻ» ՍՊԸ
Հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան փող. 1ա
ՀՎՀՀ՝ 00074645
տնօրեն՝ Վահրամ Աֆանդյան
նույնականացման քարտ՝ 000523969, տրված 15.02.2013թ., 011-ի կողմից